

26/11-1
26.11.13թ.

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ
պրն Ա. Զավադյանին

Հարգելի պարոն Զավադյան

Կից Ձեզ եմ ներկայացնում «Շեն Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերության 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 40000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքների մասին հաշվետվությունը:

Միաժամանակ հայտնում եմ, որ «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ն, հանդիսանալով առաջին ոչ ֆինանսական կազմակերպությունը, որը դեռևս 2007թ.-ին հրապարակայնորեն իրականացրեց իր կողմից թողարկված պարտատոմսերի տեղաբաշխումը, անչափ կարևորում է կորպորատիվ պարտքի հրապարակային շուկայի զարգացումը: Եվ բոլորովին պատահական չէր այն հանգամանքը, որը ընկերությունը առանց վարանելու համաձայնել է մոտ ապագայում սկսել միջազգային ռեյտինգային գործակալությունից վարկանիշ ստանալու գործընթացը: Ուստի, սույն գրությամբ ընկերությունը վերահաստատում է Հայաստանի կապիտալի շուկայում իր ակտիվ դերակատարությունը պահպանելու մտադրությունը, և իր պատրաստակամությունն է հայտնում ապագայում թողարկել նաև ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսեր: Հաշվի առնելով ՎՋԵԲ-ի հետ երկար տարիների համագործակցությունը և ներկայումս ՎՋԵԲ-ի, ՍԱՋԲ-ի և «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ի միջև փայլամասնակցության համար ընթացող բանակցությունները, պարտատոմսերի ապագա թողարկումները մեծապես պայմանավորված կլինեն այն ֆինանսական հանձնառություններով, որոնք կսահմանվեն այդ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ ստորագրվող ներդրումային համաձայնագրերով:

Կից՝ արժեթղթերի տեղաբաշխման արդյունքների մասին հաշվետվությունը՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Պապ Բադալյան
գլխավոր գործադիր տնօրեն
26.11.2013թ.



Ալբերտ Բաբայան
26.11.13
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ 4

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- Տեղաբաշխման ընթացքի վերաբերյալ
- Տեղաբաշխման արդյունքների վերաբերյալ

«ՇԵՆ ՀՈՂԻՆԳ» Փակ Բաժնետիրական Ընկերություն

բողարկող: ֆիրմային անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը (անունը, ազգանունը)

0043, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Շիրակի 2/2

հեռ. (37410) 46-01-01, էլ. փոստ՝ shen@shenholding.com, ինտ. կայքը՝ www.shenholding.com

բողարկողի գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները

Արժեթղթի դասը (տեսակը) **անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային պարտատոմս**

Հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը / 20 / 11 / 2013 թ. / **ավարտը՝ / 25 / 11 / 2013 թ. /**
 (ամսաթիվը) (ամսաթիվը)

Տեղաբաշխման ժամկետները՝ սկիզբը / 20 / 11 / 2013 թ. / **ավարտը՝ / 25 / 11 / 2013 թ. /**
 (ամսաթիվը) (ամսաթիվը)

ՎԱՃԱՍՎԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ


Վճարման ձևը	Միանվագ վճարում		Տարածանկետ վճարում	
	քանակը	գումարը (նշելով արժույթը)	քանակը	փաստացի վճարված գումարը (նշելով արժույթը)
ՀՀ արժույթով	--	--	--	--
արտարժույթով	40 000 հատ	4 005 571.08 ԱՄՆ դոլար	--	--
գույքով	--	--	--	--
այլ բվում արժեթղթերով	---	--	--	--

Վաճառված արժեթղթերի ընդհանուր քանակը **40 000 հատ**

Հրապարակային տեղաբաշխման գինը՝
նշելով արժույթը *
մեկ պարտատոմսի գինը՝
20.11.2013թ. – 100 ԱՄՆ դոլար,
21.11.2013թ. – 100,0296 ԱՄՆ դոլար,
22.11.2013թ. – 100,0592 ԱՄՆ դոլար,
25.11.2013թ. – 100,1480 ԱՄՆ դոլար

Վաճառված արժեթղթի միջին գինը՝ նշելով արժույթը * **մեկ պարտատոմսի գինը 100,1393 ԱՄՆ դոլար**

Պատասխանատու անձ՝ **Արմեն Բաղդասարյան**
(անուն, ազգանուն)


Խորհրդի անդամ/
գործադիր տնօրեն
(պաշտոն)

 (ժողովագրություն)
 « 25 » « նոյեմբերի » 2013թ.

Ծանոթություն
* Եթե արժեթղթի գինը վճարումն արդեն կատարվել են մեկից ավելի արժույթով, ապա վաճառված արժեթղթերի միջին գինը կհրապարակվի հրապարակային տեղաբաշխման գինը անհրաժեշտ է նշել ըստ յուրաքանչյուր արժույթի: